**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԱՄՄԲ-ԲՄԾՁԲ-25/1**

«Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար աղբահանություն և սանիտարական մաքրման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄԲ-ԲՄԾՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել ծառայության նախահաշվային արժեքի և տեխնիկական բնութագրի փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** ԱՄՄԲ-ԲՄԾՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, մասնավորապես՝ ծառայության նախահաշվային արժեքը և տեխնիկական բնութագիրը թերի է շարադրված, ուստի անհրաժեշտ է կատարել լրացում և ներկայացնել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

**« 1.Մայթեզրերի խոտերի հեռացում, Դեղապատում**

Մեծամոր համայնքի 30 գյուղերում տարվա բոլոր ամիսներին , անկախ եղանակային պայմաններից կատարել մայթեզրերի խոտերի հեռացում հատուկ տեխնիկայի միջոցով: Այն հատվածներում, որտեղ հնարավոր չէ տեխնիկայի միջոցով կազմակերպել, կազմակերպել մարդկային ուժով հատուկ գործիքների միջոցով: Խոտերի կտրումից անմիջապես հետո տարածքի դեղապատում հատուկ տեխնիկայի միջոցով, կտրված խոտերի բարձում և տեղափոխում դեպի աղբավայր:

**2. Ծառերի էտում**

Ծառերի էտը կազմակերպել տարեկան 2 անգամ գարնան և աշնան ամիսներին: Կազմակերպել մարդկային ուժով ավտոաշտարակի և հատուկ գործիքների (այգու մկրատ, այգու սղոց, օդային մկրատ, օդային սղոց) միջոցով: Ծառերի էտը կազմակերպել հետևյալ գործոնների հիման վրա՝

1. Երիտասարդ ծառերի համար կարճեցում
2. Հասուն ծառերի համար նոսրացում
3. Ծեր ծառերի համար երիտասարդացում

Էտի արդյունքում առաջացած փայտերը տեղափոխել համայնքի հետ համաձայնեցված վայրեր: Հաշվի առնելով, որ ձեռք է բերվելու նոր ծառայություններ, հետևաբար անհրաժեշտ է նաև փոփոխել ծառայության նախահաշվային արժեքը, հետևյալ կերպ 204,000,000.00 ՀՀ դրամ»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:


Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 10)
Էլ. փոստ՝ m.simonyan@promotion.am
Պատվիրատու՝ «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ